

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ**

*Համայնքի 2018 թվականի*

**ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**

*Կազմել է՝ համայնքի ղեկավար ԷՂԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆԸ*

*Հաստատվել է՝ համայնքի ավագանու. մարտի 30 –ի թիվ 23-Ա որոշմամբ  
(նիստի ամսաթիվը)*

*ՏԱՇԻՐ 2018թ.*

# Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ-----	4
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)-----	11
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ-----	32
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ-----	41
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ-----	44

## **Ներածություն**

Տաշիր համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

**ՏԱՊ-ի 1-ին բաժնում** ներկայացված են՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (Աղյուսակ 1), ոլորտային նպատակները (Աղյուսակ 2):

**ՏԱՊ-ի 2-րդ բաժնում** բերված են համայնքի 2018 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (Աղյուսակ 3) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (Աղյուսակ 5), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (Աղյուսակ 4):

**ՏԱՊ-ի 3-րդ բաժնում** ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը (Աղյուսակ 6):

**ՏԱՊ-ի 4-րդ բաժնում** բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (Աղյուսակ 7):

**ՏԱՊ-ի 5-րդ բաժնում** (Աղյուսակ 8) ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

## **1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները**

Ըստ համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 30-ի թիվ ..... որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի համայնքի տեսլականն է՝ մինչև 2022թ. Տաշիր համայնքը դարձնել զբոսաշրջության և կաթնային անասնապահության կենտրոն, ինչպես նաև բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել մաքուր, բարեկարգ, գրավիչ բնակավայր և մրցունակ մյուս համայնքների նկատմամբ:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի 2017 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ֆիքսված արժեքին 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կանխատեսվող ցուցանիշի ավելացումն է, հաշվի առնելով համայնքում առկա զարգացումները և միտումները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2018 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

**ՏԱՊ**-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ. ոչ վատ, 6 - ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ:

**Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները**

<b>Ցուցանիշ</b>	<b>Ելակետային արժեք</b>	<b>Թիրախային արժեք</b>
<i>Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)</i>	<i>38,7</i>	<i>39,8</i>
<i>Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)</i>	<i>15865</i>	<i>15940</i>

*Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):*

**Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները**

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից Տաշիր բազմաբնակավայր համայնքում, բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	Ավելի շատ լավ, քան վատ
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	38,7	39,8
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>			
2018 թվականի ընթացքում պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: Ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: Ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			

<p>Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:</p>	<p>Բնակիչների բավարարվածությունը համայնքում կապիտալ վերանորոգված բնակելի շենքերի շքամուտքները</p>	<p>Ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին՝ ոչ լավ. ոչ վատ</p>
	<p>Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %</p>	<p>23.8</p>	<p>30.1</p>
	<p>Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունն ից (հարցումների հիման վրա)</p>	<p>Ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին՝ ոչ լավ. ոչ վատ</p>
	<p>Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունն ից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>Ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>
	<p>Բնակիչների բավարարվածությունը համայնքում վերանորոգված բնակելի շենքերի տանիքները</p>	<p>Ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին՝ ոչ լավ. ոչ վատ</p>
<p><b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b></p>			
<p>2018 թվականի ընթացքում հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: Ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p><b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b></p>			
<p>Բարձրացնել ենթակառուցվածքային ծանապարհների և ինժեներական կառույցների</p>	<p>Համայնքային ենթակառուցվածքային ծանապարհների և</p>	<p>Ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>

<p>սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթուղիները:</p>	<p>ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության և աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>լավ</p>	
	<p>Ասֆալտապատված ներհամայնքային ճանապարհներ (բացառությամբ՝ միջպետական, հանրապետական, տեղական) ճանապարհների և փողոցներ, կմ</p>	<p>17,9</p>	<p>18</p>
<p><b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b></p>			
<p>2018 թվականի ընթացքում առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: Ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p><b>Ոլորտ 8. Կրթություն</b></p>			
<p>Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:</p>	<p>ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության և աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>Բավականին լավ</p>	<p>լավ</p>
<p><b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b></p>			
<p>2018 թվականի ընթացքում մշակույթի և երիտասարդության հետ տարվող</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>



աշխատանքների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: Ոլորտային նպատակ չի սահմանվել:			
<b>Ոլորտ 10. Առողջապահություն</b>			
2018 թվականի ընթացքում առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: Ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>			
2018 թվականի ընթացքում ֆիզիկական կուլտուրա և սպորտի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: Ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>			
Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:	Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ	այո	այո
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից	Ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ
<b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b>			
2018 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: Ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա</b>			
2018 թվականի ընթացքում անասնաբուծություն և բուսասանիտարիայի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: Ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
Ապահովել համայնքի բոլոր	Համայնքի	Ավելի շատ	Ավելի շատ

<p>բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:</p>	<p>բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա)</p>	<p>վատ, քան լավ</p>	<p>լավ, քան վատ</p>
	<p>Տեղափոխված աղբի ծավալը, տոննա</p>	<p>3360,0</p>	<p>3540,0</p>
<p><b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b></p>			
<p>2018 թվականի ընթացքում ոլորտում զբոսաշրջություն ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p><b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b></p>			
<p>2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>

**2. Համայնքի 2018 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)**

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

**Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով**

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	109 582,70	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		<b>109 582,70</b>	
<b>Ոլորտ 4.Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
1.	Տաշիր քաղաքի Էրեբունի 6, Կ. Դեմիրճյան 3,Շահումյան 7, Երևանյան 9, Վ. Սարգսյան 12 բնակելի շենքերի շքամուտքների կապիտալ վերանորոգում	4300,0	ք. Տաշիր
2.	Համայնքի գյուղական բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի կառուցում	3000,0	Բնակավայրը՝ Բլազողարնոյե
3.	Տաշիր քաղաքի և բնակավայրերի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնում, հենասյունների տեղադրում	5980,0	Տաշիր քաղաք և Բլազողարնոյե, Դաշտադեն, Լեռնահովիտ, Կաթնառատ, Մեղովկա, Մեղվահովիտ, Նովոսելցովո, Սարատովկա բնակավայրեր
4.	<b>Տաշիր քաղաքի Անի բնակելի զանգվածի թիվ 3 շենքի 2-րդ մասնաշենքի, թիվ 2 շենքի և թիվ 7 շենքի փանիքների վերանորոգում:</b>	<b>11688,33</b>	<b>ք. Տաշիր</b>
<b>Ընդամենը</b>		<b>24968,33</b>	
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>			
1.	Տաշիր համայնքի ճանապարհների կապիտալ վերանորոգում	2950,0	Տաշիր քաղաք, Բլազողարնոյե և Լեռնահովիտ բնակավայրեր
<b>Ընդամենը</b>		<b>2950,0</b>	
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>			
1.	Համայնքում նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթության ծառայությունների մատուցում	46203,90	

3.	Միջնակարգ ընդհանուր կրթություն	2500,00	
2.	Համայնքում արտադարձական կրթության ծառայության մատուցում	41667,00	
Ընդամենը		90 370,90	
<b>Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն</b>			
1.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	2050,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		2050,0	
<b>Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
1.	Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	58000,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		58000,0	
Ընդհանուրը		<b>287921,93</b>	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

**Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով**

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
<b>Ոլորտ 4.Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
	Համայնքի գյուղական բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի կառուցում	6500,0	
Ընդամենը		6500,0	
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>			
1.	Տաշիր համայնքում երեխաների զբաղվածության ապահովման ծրագիր	20465,14	ք. Տաշիր
Ընդամենը		20465,14	
<b>Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
1.	Տաշիր խոշորացված համայնքի էկոլոգիական միջավայրի բարելավում և տնտեսական զարգացման հիմքերի ստեղծում՝ բնապահպանական խնդիրների լուծման միջոցով:	209360,0	ք. Տաշիր և բոլոր բնակավայրեր
Ընդամենը		209360,0	
Ընդհանուրը		<b>236325,14</b>	

*Մտորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների:*

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>					
<p><b>Ոլորտային նպատակ .</b>                      Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:</p>		<p><b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b>                      1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից – ավելի շատ լավ, քան վատ                      2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում՝ 39,8%</p>			
<p><b>Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում</b>  <b>Բնակավայրերը՝ ք. Տաշիր և Բլագոդարնոյե, Դաշտադեմ, Լեոնահովիտ, Կաթնատատ, Մեդովկա, Մեղվահովիտ, Նովոսելցովո, Սարատովկա բնակավայրեր</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ.</b>                      Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը:</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b>                      Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը – ավելի շատ լավ, քան վատ</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ.</b>                      ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են</p>

<p><b>Միջանկյալ արդյունք 1.</b> Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b> 1 ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա) – բավականին լավ 2.ՏԻՄ-երի կողմից մատուցված համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների թիվը -2 3.Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 5%-ով 4.Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում-248 օր</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ</p>	<p>2018թ. հունվար –2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p><b>Միջոցառումներ (գործողություններ) .</b> 1. Աշխատակազմի պահպանություն</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման</p>			

<p>2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում</p> <p>3. Համայնքի անշարժ գույքի կառավարում</p> <p>4. Համայնքապետարանի և վարչական ղեկավարների նստավայրերի շենքերի և գույքի ընթացիկ նորոգում</p>		<p>ծախսեր՝ <b>109582,7</b> հազ.դրամ</p> <p>2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 60</p> <p>3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1</p> <p>4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք</p> <p>5. Վարչական ղեկավարների նստավայրերի շենքեր և գույք <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ</p>			
<p><b>Միջանկյալ արդյունք 2.</b> Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b></p> <p>1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ-3,5 %-ով</p> <p>2. Հարկային պարտականությունները չկատարողների նկատմամբ համայնքի կողմից դատարան ներկայացված հայցադիմումների թիվը-7</p> <p>3. Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում-7 %-ով</p> <p>4. Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում -3%-ով</p> <p>5. Համայնքի բյուջեի</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b></p> <p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Ֆինանսական, հաշվապահական հաշվառման, եկամուտների հավաքագրման ու գանձման բաժնի պետ գլխավոր հաշվապահ, վարչական ղեկավարներ, երկրորդ կարգի մասնագետներ</p>	<p>2018թ. հունվար –2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>



	սեփական եկամուտների գծով առկա ապառքների նվազեցում- 5%-ով				
<p><b>Միջոցառումներ (գործողություններ) .</b></p> <p>1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցների վերապատրաստումներ</p> <p>2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում</p> <p>3. Ապառքներ ունեցող հարկատուների հետ բացատրական աշխատանքների իրականացում, պարտականությունները չկատարողների նկատմամբ դատարան կամ ԴԱՀԿ հայցադիմումների ներկայացում</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b></p> <p>1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ` 15</p> <p>2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ` առկա է</p> <p>3. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ` 206610,1 հազ.դրամ</p>			
<p><b>Միջանկյալ արդյունք</b></p> <p>3. Բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b></p> <p>1. Համայնքապետարանում բնակիչների սպասարկման «մեկ պատուհան» սկզբունքի կիրառումը- առայժմ չի կիրառվում</p> <p>2. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b></p> <p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ-կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար, ՀՈԱԿ-ների տնօրեններ, վարչական ղեկավարներ</p>	<p>2018թ. հունվար –2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան ենթակառուցվածքների և մասնագետների առկայությունը</p>

	<p>մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - ավելի շատ լավ, քան վատ 4.ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացված դիմում-բողոքների թվի նվազում-5 %-ով 5. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը- շաբաթը 1 անգամ 6. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը – 2 օր</p>				
<p><b>Միջոցառումներ (գործողություններ) .</b> 1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում 2. Համայնքի ֆինանսական թափանցիկ և արդյունավետ կառավարում 3. Համայնքի գույքի կառավարման բարելավում</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b> 1. Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ - 44 2. Տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր – առկա է 3. Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -8</p>				

<p>4. Աշխատակազմում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի գործունակ աշխատանքային վիճակի պահպանում և շահագործում</p> <p>5. Աշխատակազմի աշխատակիցների և վարչական ղեկավարների աշխատանքային պայմանների բարելավում</p> <p>6. Համացանցային կայքում առկա տեղեկատվության պարբերական թարմացում</p>	<p>4. Աշխատակազմում տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -1</p> <p>5. ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգեր -1</p> <p>6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք – առկա է</p>
---	---

**Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն**

<p><b>Ոլորտային նպատակ.</b>      Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:</p>	<p><b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b></p> <p>1. Բնակելի շենքերի կապիտալ վերանորոգված շքամուտքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ-13%</p> <p>2. Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ – 30,1 %</p> <p>2. Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) - միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p> <p>3. Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p> <p>4. Բնակելի շենքերի կապիտալ վերանորոգված տանիքների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ-70%</p>
---	--

**Ծրագիր 1.**  
 Տաշիր քաղաքի Էրեբունի 6, Կ. Դեմիրճյան 3, Շահումյան 7, Երևանյան 9, Վ. Սարգսյան 12 բնակելի շենքերի շքամուտքերի կապիտալ վերանորոգում  
**Բնակավայրը՝ Տաշիր**

<b>Ծրագրի նպատակ.</b>	<b>Ծրագրի ազդեցության</b>	<b>Ծրագրի</b>	<b>Համայնքի</b>	<b>2018թ.</b>	<b>Համապատաս</b>
-----------------------	---------------------------	---------------	-----------------	---------------	------------------

<p>Բարելավել Տաշիր քաղաքի բնակելի շենքերի շքամուտքերը</p>	<p><b>(վերջնական արդյունքի) ցուցանիշ .</b> Տաշիր քաղաքի բնակելի շենքերի բնակիչների շենքային պայմանները բարելավվել են, բարեկարգվել է բնակելի շենքերի շքամուտքերը</p>	<p><b>գնահատման համակարգ .</b> ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Պեկավարի տեղակալ, «Տաշիրի քաղաքային տնտեսությանը սպասարկող հիմնարկ» ՀՈԱԿ-ի տնօրեն <b>Իրականացումը</b> մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի միջոցով</p>	<p>հունիս – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>խան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք</b> 1. Բարելավել Տաշիր քաղաքի բնակելի շենքերի շքամուտքերը</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. բարեկարգվել է բնակելի շենքերի շքամուտքերը, կապիտալ վերանորոգման տևողությունը-3 ամիս 2. Բնակիչների կարծիքը կապիտալ վերանորոգված շենքերի շքամուտքերի վերաբերյալ-բավականին լավ</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ</p>	<p>Համայնքի Պեկավարի տեղակալ, «Տաշիրի քաղաքային տնտեսությանը սպասարկող հիմնարկ» ՀՈԱԿ-ի տնօրեն</p>	<p>2018թ. հունիս – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան խան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկա են եղել</p>

	3. կապիտալ վերանորոգված շենքերի շքամուտքերի առկայությունը – առկա է				
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b></p> <p>1. Տաշիր քաղաքի բնակելի շենքերի շքամուտքերի կապիտալ վերանորոգման վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում և նախապատրաստում</p> <p>2. Տաշիր քաղաքի բնակելի շենքերի շքամուտքերի կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում և վերահսկում</p> <p>3. Ֆինանսական միջոցների հատկացում կապալառուին</p> <p>4. Աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <p>1. Համայնքի բյուջեից նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 4300.0 հազ. դրամ</p> <p>2. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2</p> <p><b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ</p>			
<p><b>Ծրագիր 2. Համայնքի գյուղական բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի կառուցում</b></p> <p><b>Բնակավայրը՝ Բլագոդարնոյե</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ.</b> Կառուցել խմելու ջրի ջրամատակարարման համակարգ, բարելավել խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Բնակավայրերում խմելու ջրի հասանելիությունը, Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության որակից բնակիչների</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b> ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, վարչական ղեկավարներ ,</p> <p><b>Իրականացումը՝</b> մրցույթում հաղթող</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>

<p>մատչելիությունը և որակը համայնքի գյուղական բոլոր բնակավայրերում</p>	<p>բավարարվածության աստիճանը - միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>		<p>ճանաչված մասնակցի միջոցով</p>		
<p><b>Միջանկյալ արդյունք 1.</b> Բնակավայրն ապահովվել է խմելու ջրով, բարելավվել է խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունը և որակը համայնքի գյուղական բոլոր բնակավայրերում</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. Կառուցված ջրագծերի երկարությունը - 4000 մ 2. Տարվա ընթացքում ջրագծերի կառուցում իրականացված բնակավայրերի թիվը - 1 3. Բնակիչների կարծիքը խմելու ջրի ջրամատակարարման մատչելիությունից - վատ 5. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, վարչական ղեկավարները , <b>Իրականացումը՝</b> մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի միջոցով</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայությունը</p>
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1. Ջրագծերի կառուցման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստում 2. Ջրամատակարարման ներբնակավայրային համակարգերի կառուցման աշխատանքների իրականացում և վերահսկում 3. Վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքի բյուջեով նախատեսված ջրագծի կառուցման ծախսեր՝ <b>9500.0</b> հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 5 3. Ջրագծի կառուցման համար անհրաժեշտ խողովակների և այլ նյութեր <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ</p>				

**Ծրագիր 3. Տաշիր քաղաքի և բնակավայրերի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնում, հենասյուների տեղադրում**

**Բնակավայրերը՝ Տաշիր քաղաք և Բլագոդարնոյե, Դաշտադեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Մեղովկա, Մեղվահովիտ, Նովոսելցովո, Սարատովկա բնակավայրեր**

<p><b>Ծրագրի նպատակ.</b> Բարձրացնել Տաշիր քաղաքի և Բլագոդարնոյե, Դաշտադեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Մեղովկա, Մեղվահովիտ, Նովոսելցովո, Սարատովկա բնակավայրերի փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը, փողոցները դարձնել լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, հյուրերի, տրանսպորտային միջոցների և զբոսաշրջիկների համար</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1. Տաշիր քաղաքի և Բլագոդարնոյե, Դաշտադեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Մեղովկա, Մեղվահովիտ, Նովոսելցովո, Սարատովկա բնակավայրերի փողոցները դարձնել լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, հյուրերի, տրանսպորտային միջոցների և զբոսաշրջիկների համար - 75%-ով 2. Գիշերային լուսավորություն ունեցող փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ – 30,1%</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b> ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքիղեկավարի տեղակալ, բնակավայրերի վարչական ղեկավար, &lt;&lt;Տաշիրի քաղաքային տնտեսությանը սպասարկող հիմնարկ&gt;&gt;- ՀՈԱԿ-ի տնօրեն, <b>Իրականացումը՝</b> մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի միջոցով</p>	<p>2018թ. հունիս – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ առկա են</p>
--	--	---	--	---	--

<i>համար:</i>					
<p><b>Միջանկյալ արդյունք 1.</b>  <i>Տաշիր քաղաքի և Բլազոդարնոյե, Դաշտադեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Մեղովկա, Մեղվահովիտ, Նովոսելցովո, Սարատովկա բնակավայրերի փողոցները դարձել են լուսավոր, գեղեցիկ և բարեկարգ</i></p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b>  <i>1. Փողոցներում տեղադրված լուսատուների և հենասյուների քանակը - 102</i>  <i>2. Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից – ավելի շատ լավ, քան վատ</i>  <i>4. Ծրագրի իրականացման ժամկետը – 3 ամիս</i></p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b>  <i>Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, համայնքի բնակիչներ</i></p>	<p><i>Համայնքի ղեկավարի տեղակալ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, &lt;&lt;Տաշիրի քաղաքային տնտեսությանը սպասարկող հիմնարկ&gt;&gt;- ՀՈԱԿ-ի տնօրեն,</i></p>	<p><i>2018թ. հունիս – 2018թ. դեկտեմբեր</i></p>	<p><i>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկա են</i></p>
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b>  <i>1. Տաշիր քաղաքի և Բլազոդարնոյե, Դաշտադեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Մեղովկա, Մեղվահովիտ, Նովոսելցովո, Սարատովկա բնակավայրերի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնման, հենասյուների տեղադրման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում</i>  <i>2. Փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնման, հենասյուների տեղադրման աշխատանքների իրականացում</i></p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b>  <i>1. Համայնքի բյուջով նախատեսված ծախսեր՝ 5980.0 հազ. դրամ</i>  <i>2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 10</i>  <i>3. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի և տեխնիկայի օգտագործում</i>  <i>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2</i>  <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> <i>համայնքի բյուջեի միջոցներ</i></p>				



<p>և վերահսկում</p> <p>3. Աշխատանքների կատարման ավարտական ակտերի կազմում, քննարկում և հաստատում</p> <p>4. Ֆինանսական միջոցների հատկացում</p>					
<p><b>Ծրագիր 4. Տաշիր քաղաքի Անի բնակելի զանգվածի թիվ 3 շենքի 2-րդ մասնաշենքի, թիվ 2 շենքի և թիվ 7 շենքի տանիքների վերանորոգում:</b></p> <p><b>Բնակավայրը՝ Տաշիր</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ</b></p> <p>Ունենալ բարեկարգ տանիքներով շենքեր:</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b></p> <p>1. Անի բնակելի զանգվածի թիվ 3 շենքի 2-րդ մասնաշենքի, թիվ 2 շենքի և թիվ 7 շենքի բնակելի շենքերի տանիքները վերանորոգվել են – առկա է</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ</b></p> <p>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, ֆինանսական բաժնի պետ, ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ,</p>	<p>2018թ. հունիս-2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ առկա են</p>
<p><b>Միջանկյալ արդյունքներ</b></p> <p>1. Վերանորոգվել են Անի բնակելի զանգվածի թիվ 3 շենքի 2-րդ մասնաշենքի, թիվ 2 շենքի և թիվ 7 շենքի բնակելի շենքերի տանիքները</p>		<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b></p> <p>1. Վերանորոգված տանիքներ ունեցող բազմաբնակարան շենքերի քանակը – 28</p> <p>4. Բնակիչների բավարարվածությունը բնակարանային</p>		<p><b>Տեղեկատվական աղբյուրներ</b></p> <p>Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ</p>	

	<p>շինարարության ոլորտում մատուցված ծառայություններից - լավ</p> <p>5.Ծրագրի իրականացման ժամկետը -6 ամիս</p>	
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b></p> <p>1.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում:</p> <p>2. Գնումների գործընթացի կազմակերպում, պայմանագրերի կնքում:</p> <p>3. Անի բնակելի զանգվածի թիվ 3 շենքի 2-րդ մասնաշենքի, թիվ 2 շենքի և թիվ 7 շենքի բնակելի շենքերի տանիքների վերանորոգում</p> <p>4. Կազմել, քննարկել և հաստատել աշխատանքների կատարման ավարտական ակտերը:</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <p>Ծրագրի իրականացման համար նախատեսվել է ծախսել 11688,33 հազ. ՀՀ դրամ, որից</p> <p>1.Համայնքի բյուջեով նախատեսված ծախսերը – 7012,998 հազ. ՀՀ դրամ</p> <p>2. 2018թ. պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա- 4675,332 հազ. ՀՀ դրամ</p> <p>2.Համայնքային տեխնիկա և գույք</p> <p>3.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի քանակը՝ 6</p> <p><b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ և պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա</p>	
<p><b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b></p>		
<p><i>Ոլորտային նպատակ .</i></p> <p><i>Բարձրացնել համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:</i></p>	<p><i>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</i></p> <p>1.Համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p> <p>2.Ասֆալտապատված ներհամայնքային ճանապարհների և փողոցների երկարությունը՝ 18 կմ</p>	

<b>Ծրագիր 1. Տաշիր համայնքի ճանապարհների կապիտալ վերանորոգում  Բնակավայրերը՝ Տաշիր քաղաք, Բլագոդարնոյե և Լեռնահովիտ բնակավայրեր</b>					
<p><b>Ծրագրի նպատակ.</b>  1. Վերանորոգել Տաշիր քաղաքի Դպրոցականներ փողոցում՝ 300քմ, Բլագոդարնոյե՝ 30 քմ և Լեռնահովիտ՝ 20 քմ բնակավայրերի ճանապարհները, վերացնել փողոցների ջրափոսերը և դրանք դարձնել անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b>  Ապահովվել բնակչությանը բարեկարգ, ասֆալտապատ ճանապարհներով երթևեկելու ծառայության մատուցումը - 100 %-ով</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ,</b>  ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, Բլագոդարնոյե և Լեռնահովիտ գյուղերի վարչական ղեկավարներ,  <b>Իրականացումը</b>  մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի միջոցով</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ առկա են</p>
<p><b>Միջանկյալ արդյունքներ.</b>  1. Տաշիր քաղաքի, Բլագոդարնոյե և</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b>  1. Վերանորոգված</p>	<p><b>Տեղեկատվական աղբյուրներ.</b>  Ծրագրի գնահատման</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, Բլագոդարնոյե</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և</p>

<p>Լեռնահովիտ բնակավայրերի բնակիչներն ունենում բարեկարգ ճանապարհներ: <b>2. Բնակիչները չեն կատարում մեքենաների և տեխնիկայի անսարքություններ ի վերացման ավելորդ ծախսեր:</b></p>	<p>ճանապարհը- Տաշիր քաղաքում-300քմ է, Բլագոդարնոյե և Լեռնահովիտ բնակավայրերում համապատասխանաբա ր 30 և 20քմ: <b>2. Բնակիչների բավարարվածությունը վերանորոգված ճանապարհների վիճակից – բավականին լավ 4. Ծրագրի իրականացման ժամկետը -1 ամիս</b></p>	<p>համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվությունն եր, Տաշիր քաղաքի, Բլագոդարնոյե և Լեռնահովիտ բնակավայրերի բնակիչներ</p>	<p>ոյե և Լեռնահովի տ բնակավայր երի վարչական ղեկավարնե ր, մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի միջոցով</p>	<p>եր</p>	<p>Ֆինանսական ռեսուրսներ առկա են:</p>
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b> 1. Կազմել ճանապարհների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: 2. Վերահսկել ճանապարհների նորոգման աշխատանքները: 3. Աշխատանքների կատարման ավարտական ակտերի կազմում, քննարկում և հաստատում:</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքի բյուջեով նախատեսված վերանորոգման ծախսեր՝ <b>2950,0</b> հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 5 3. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի և տեխնիկայի օգտագործում 4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2 <b>Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</b></p>			
<p><b>Ոլորտ 8. Կրթություն</b></p>					
<p><b>Ոլորտային նպատակ.</b> Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:</p>		<p><b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը</p>			

<i>(հարցումների հիման վրա) - լավ</i>					
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>					
<b>Ոլորտային նպատակ.</b> Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:			<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1. Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ -այո 2. Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից - միջին՝ ոչ լավ, ոչ վատ		
<b>Ծրագիր 1. Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին</b> <b>Բնակավայրերը՝ Տաշիր քաղաք և Բլագոդարնոյե, Դաշտադեմ, Լեոնահովիտ, Կաթնառատ, Մեղովկա, Մեղվահովիտ, Նովոսելցովո, Սարատովկա բնակավայրեր</b>					
<b>Ծրագրի նպատակ.</b> Բարելավել անապահով ընտանիքների հետ տարվող աշխատանքների որակը և հասցեականությունը	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Բարելավվել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և ծառայության մատչելիությունը (հարցումների հիման վրա) - բավականին լավ	<b>Ծրագրի գնահատման համակարգ.</b> ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, աշխատակազմի սոցիալական հարցերով զբաղվող մասնագետ, վարչական ղեկավարներ	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսներ առկա են
<b>Միջանկյալ արդյունք 1.</b> Բարելավվել է սոցիալապես անապահով	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի	<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Համայնքի ղեկավար, վարչական	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսները առկա են

<p>ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը</p>	<p>ընտանիքների թիվը -95  2. Սոցիալական աջակցություն ստանալու դիմումների քանակը ներկայացրածների թիվը -120  3. Սոցիալական աջակցություն ստացած հաշմանդամների թիվը -15  4. Սոցիալական աջակցություն ստացած ուսանողների թիվը -1  5. Բնակչության կարծիքը սոցիալական աջակցության ծառայության մատուցման հասցեականության մասին - միջին ոչ լավ, ոչ վատ  6. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի</p>	<p>ղեկավարներ, աշխատակազմի սոցիալական հարցերով զբաղվող մասնագետ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, շահառուներ</p>	<p>աշխատակազմի սոցիալական հարցերով զբաղվող մասնագետ, վարչական ղեկավարներ</p>		
<p><b>Միջոցառումներ (գործողություններ)</b>  1. Սոցիալական աջակցության տրամադրման կարգի ընդունում ավագանու կողմից  2. Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հայտնաբերում  3. Սոցիալական աջակցություն ստանալու</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b>  1. Համայնքի բյուջեով նախատեսված սոցիալական աջակցության տրամադրման ծախսեր՝ 2050.0 հազ. դրամ,  2. Սոցիալական աջակցության հարցերով զբաղվող աշխատակիցներ՝ 1</p>			

<p>դիմումների քննարկում և աջակցության տրամադրում</p>		<p><b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ</p>			
<p><b>Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն</b></p>					
<p><b>Ոլորտային նպատակ.</b> Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:</p>		<p><b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա) – ավելի շատ լավ, քան վատ 2. Տեղափոխված աղբի ծավալը՝ 3540 տոննա</p>			
